

զակ : Ո՛րքան արագաթռիչ , և ինչպիսի է զորա բնագրական կարողութիւնն :

— Անշուշտ ոչ միայն պատմաբանի՝ այլ և իւրաքանչիւր ուսումնասիրի ուղեղին մէջ՝ տակաւին չէ մարած Գաղղիոյ յետին պատերազմի յիշատակն : Պարիզ ողբալի վիճակի մէջ է , միշտ հանրութեան վառ և պող համարուած ժողովուրդ մը՝ արդ կը պաշարէ կը ումարտօժէ համակրելի ազգին մայրաքաղաքը : Պատերազմն յուզեալ է , պարիզեցիք ձմրան մնառախապատ հորիզոնին մէջ ազգի ազգի վշտերով կը տազնապին , սոֆն՝ այլ մանաւանդ բարոյական խռովութիւնն որ քան զամենն անցթագոյն է՝ կ'ընկնէ խեղճ ժողովուրդը . չունին լուր մի մայրաքաղաքէն՝ զաւառք , քաղաք և զիւրք , ուր հայրերն , մայրերն , կանայք , նաև սղայք աղիողորմ վշտաց մէջ կը տառապին ողբալով՝ Բնչ եղաւ Պարիզ , Բնչ եղան մերայինք : Հրոյ և հրազինուց բոլորակ մը , անանցանելի բոլորակ մը կը բաժնէ զպարիզեցիս իրենց սիրելի հայրենակիցներէն և բովանդակ աշխարհներէն : Ահա օդապարիկ մը Պարիզու շէնքերէն վեր կը բարձրանայ , քաղաքացոց աչերն ուրախալի յուսով անոր ուղղուած են , զորա մէջ կան քաջ նամակատար աղանձիներ , որոնք արդ լուրեր պիտի տանին հայրենակցաց և փոխադարձաբար պատասխաններ պիտի բերեն իրենց սիրելի տեսրց զարմանալի եղանակաւ : Քաղաքին զարհուրելի պատուարէն դուրս կ'ելնէ օտապարիկն , քիչ ժամանակէն ազանիք ասոր անոր ձեռքը կը հասնին , պանդուխտ կամ զաւառակից զազդիացիք կը զետեղեն նոցա ձիւնափայլ թևերուն ներքև թղթոյ նուրբ և փոքր թերթիկներ՝ զանձք նամակաց , զորս նոքա պարիզեցոց պիտի հասցընեն՝ իրք հաւատարիմ նամակաբաշխք . կ'արձակուին աղանձիներն , մթնոլորտի մէջ նոքա պարուրած և կը ձախրեն , երբ կը բարձրանան կը մեծցընեն իրենց բոլորակը , յանկարծակի կ'ուզեն իրենց թռիչք դէպ ի հեռի և անտես որմեր՝ ուր կան նոցա բոյներն :

— Ոչ մի աշխարհագէտ ասոնց կանխաւ զրծած էր իրենց կատարելիք ճանապարհը . ոչ մի նշանակէտ կ'առաջնորդէր զասոնք եթերական միջոցին մէջ , ինչպէս արաբական ուղ-

տապանը յանապատս : Աշխարհագրութիւնը նոցա բնագրման մէջ կայացած է : Նոցա միաքըն կամ յիշողութիւն իրենց կողմնացոյցն է , ինչպէս ալեծուի ուլիխանոսներու մէջ՝ փոքրիկ մազնիտի կտոր մը առաջնորդ է նաւարեկելոց :

Այս սքանչելի սուրհանդակներէն մի քանիք բարեբախտաբար կը վերադասնան ուղիղ գծով դէպ ի Պարիզ , այնպիսի արագութեամբ՝ որուն անկարելի է հաւասարել ճեպընթաց շոգեկառք մի . այլք ևս առողջ անդերնին կը հասնին , բայց նուազ արագութեամբ . մի քանիք մեռած կամ վիրաւորուած կը հասնին կ'ինկնան պաշարեալ քաղքին հողին վրայ :

Բայց , աւանդ , նոքա պարիզեցոց չեն աւետեր գլաղթութիւն՝ ինչպէս երբեմն Մարաթոնի զինուորք , այլ կը կրեն իրենց արիւնաթաթախ փետրոց ներքև՝ պատասխանիք նամակաց , տոմսակներ՝ իրենց քաջարտութեան և զիւցազնութեան վստահացեալ :

Ըստ լրագրաց քաղաքական լրոց՝ ազանիք նաև անցեալ տարի սոյնպիսի սուրհանդակութեան մէջ էին , հայրենակցաց ամենէն տազնապալի ճգնաժամին մէջ , նամակներ , լրեր կը տանէին կը բերէին մարաւանաւերէ դէպ ի Օսմանեան պաշտօնական զուռն . . .

Ազանիք այժմ ոչ միայն պատերազմի ժամանակ սուրհանդակութեան պաշտօնին կը կատարեն , այլ նաև իրենց այս զարմանալի ձիրքով օգնութեան կը հասնին անկողնոյ մէջ կիտամեռ խեղճ հիւանդաց . այսպիսի լուր մը գիտական թերթ մի\* մեզ կ'աւանդէ , զոր պատշաճ կը համարիմք հազարիւր ընթերցողաց , քանի որ նպատակնիս էր պիտել ազանոյ բարքն :

Այժմ սկովաիացի բժիշկ մը շատ հիւանդներ ունենալով , այցելութիւններ կառքով կը կատարէ , որուան մէջ անթիւ այցելութիւն կ'ընէ : Սա սովորութիւն ըրած է իրեն կառքին մէջ զանազան ճանապարհորդ աղանձիներ կրելու . ստիպողական պահուն ազնիւ բժիշկն անտոյժէ մին կ'արձակէ որ զեղազիրը տանի : Երբ աղանձին իւր բոյնը կը հասնի , բժշկին ծառաներէն մին աղանոյ թևերուն ներքև կը նայի և կ'առնու զեղազիրը և

\* Progresso 4 մարտ 1897 յէջ 63 :